

37-րդ ֆրեյմ

ՊԱՏԱՆԻՆ, ՈՎ ՀԱՐՈՒՆԱԿԵՑ ԱՊՐԵԼ ՄԻԱՅՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ

Ալֆրեդ Եաղուբզադիի անունը ինչու է վրիպում,
երբ խօսում է պատերազմում իրանահայության ունեցած
ցերղությունների մասին

37-րդ ֆրեյմ - Իրան-Իրաք պատերազմական թատուում առաջնագծում եղած կողմերի գլխին եկածի մասին թերեւս ամենաիրական վկայութիւնը կարող են տալ այնպիսի լուսանկարներ, որոնց հեղինակները ոչ աւել, ոչ պակաս անցել են միեւնոյն արհաւիրքների միջով:

«Պատերազմական լուսանկարիչ» ձեւակերպման հետ առաջինը խնդիրներ ունեն հէնց՝ լուսանկարիչները: Նրանց մտեցումները լուսանկարիչները ոչ թէ պատերազմի այլ՝ հակապատերազմական մտորումներով վաւերագրողներ են, ում համար մարդկային կեանքի ամենասարսափելի պայմանները դրդապատճառներով հնարաւոր է լուսանկարների փոխանցումներով վեր հանել ի ցոյց դնելու համար:

Իսկ երկար ժամանակ օրակարգում կար Ալֆրեդ Եաղուբզադիի գործունէութեան մասին անդրադարձը, յատկապէս այս օրերին, երբ խօսքը գնում է պատերազմական տարիներին իրանահայ համայնքի ներդրումների եւ այդ ուղղութեամբ ներած նահատակների, գերիների, վիրաւորների, ինչպէս նաեւ դիրքերի թիկունքում կամաւոր կերպով արհեստաւորների ներկայութեան մասին: Այստեղ կարծես թէ վրիպում է

պատերազմի առաջին իսկ օրերից դիրքերում յայտնուած հայ լուսանկարչի կարեւոր ներդրումի մասին յիշատակումը, ինչին էլ կոչւած է լինելու կատարուած այս հպանցիկ անդրադարձը:

Եաղուբզադիի մասին դժւար թէ հնարաւոր լինի յօդուածով որեւէ նոր բան ասել: Թէեւ օրաթերթիս էջերում քիչ չեն Ալֆրեդին ներկայ էջերն ու յօդուածները, այնուամենայնիւ ինչպէս հարկն է Ալֆրեդը չի գնահատուել ներդրածին համարժէք: Իրանի կտրուածքով նոյնպէս կարելի է արձանագրել, որ դիրքերում լրատուութիւն կատարող լրագրողներն ու լուսանկարիչները միեւնոյն վիճակի են, որից գերծ չի մնում նաեւ ինքը՝ Ալֆրեդը: Մական պէտք է մոռանալ, որ երբ Իրանի ողջ ժողովուրդը քաղաքային մեծագոյն ցուցափեղկերին դաջւած էր տեսնում արդէն իսկ աչքին հարազատ՝ ճակատներում որսորդական գէնքը ձեռքին ցեխաջրում սողացող պատանեակի լուսանկարը, կարծես մի պահ մոռացում է դրւազն արձանագրողի միեւնոյն պայմաններում յայտնուած լինելու փաստը: Եւ այդ անտեսումը տարածուած է ընդհուպ մինչեւ պատերազմական տարիներին իրանահայութեան իւրօրինակ դերի մասին

խօսելուց՝ Ալֆրեդի մասին մոռացումը:

Ալֆրեդ Եաղուբզադին երեւի իր սեփական որդիներից առաւել ստիպուած է եղել պատմելու այս պատանեակի ճակատագրի մասին: Մահւան (նահատակութեան) ելքով այդ դրւագի վախճանը լոկ դիրքերի մասին յիշատակող պահով չէ, որ իմաստաւորում է: Պատանին, լուսանկարչի նկարագրութեամբ, դեռ 13-ը չբոլորած տղայ էր, ով ինքնակամ յայտնել էր դուրսը: Չամբանի կամաւորական ջոկատում: Այստեղ՝ ցեխաջրերի մէջ սողացող խմբի պոչին յայտնուած լուսանկարիչը նկատելով տղայի սարսափահար վիճակը նրան հանդարտացնում է ասելով, որ բոլորը նրա կողքին են եւ պաշտպանելու են նրան: Ալֆրեդն այս մասին իր ֆէյսբուքեան էջում գրառում թողնելով նկատել է տալիս, որ այս խօսքերն ասել է, երբ ինքը դեռ քսան տարեկան չկար: Լուսանկարիչը պատմում է նաեւ, որ ժամեր անց, երբ նորից հանդիպում է ջոկատի տղաներին նրան յայտնում են արկի պայթիւնից պատանեակի զոհելու մասին լուրը:

Ալֆրեդ Եաղուբզադին հակամարտութիւնների լուսաբանմամբ իր աւելի քան 35 տարւայ փորձառութեամբ այսօր համեստաբար լուր է այն վաստակի մասին, որին կարող են հաւասարել միայն Ջէյմզ Նաչէյձի (կամ Նախուէյձի) կարգի հռչակ վայելող դէմքեր: Փաստ, որի մասին չգիտես ինչու փորձում է այնքան էլ չբարձրաձայնել արեւմտեան ՋԼՄ-ների քարոզչամեքենան: Այս մասին փոքրիկ մի փակագիծ բաց անելը չէր խանգարի. Այն, որ Ալֆրեդը երկար ժամանակ լուսաբանել է՝ իրարէլական զինուած ուժերի հակապաղեստինեան ակտերը, որի համար նոյնիսկ սխալմամբ առեւանգւել է ...

Ալֆրեդը լուսանկարչական աշխարհ մուտք գործեց Իրանի յեղափոխութեան թէժ օրերին, որտեղ Փոտոպարատը ձեռքին կատարեց



Photo: Michel Pouch

լուսանկարչութեան իր առաջին փորձերը: Ապրելով Իրանի յայտնի լուսանկարիչներից՝ Ասղար Բիչարէի հարեւանութեանը Ալֆրեդը վայելում է նաեւ վարպետի տւած խորհուրդներն ու երեւակման սենեակի ոսկէ հնարաւորութիւնը, որտեղ ծանօթանում է նաեւ գրանցած լեւտերի լացման եւ երեւակման հնարներին:

Պատերազմի մեկնարկային երեք տարիները, երբ դեռ չկար որեւէ կազմակերպւած մօտեցում կապւած դիրքերի մասին ֆոտոռեպորտաժների պատրաստման եւ տարածման հետ, դիրքերում արտասահմանեան խոշոր լրատուամիջոցների ներկայութիւնը անուրանալի փաստ էր: Հէնց այդ ժամանակ էլ սկիզբ դրւեց Ալֆրեդի համագործակցութեանը՝ համաշխարհային մակարդակի խոշոր լրատուամիջոցների հետ: Գործունէութիւն, որին վերջ դրւեց դուրսը: Չամբանի

զոհելուց յետոյ, որով Ալֆրեդը կորցրեց նաեւ իրեն վստահող հրահանատարին ինչպէս նաեւ դիրքերում իր ներկայութեան արգելքը բեկանող բանալին:

Ալֆրեդը միանալով համաշխարհային համբաւ վայելող լրատուամիջոցներին թողնում է Իրանը մեկնելով Փրանսիա, որտեղ էլ սկիզբն է դրւում նրա համաշխարհային մակարդակի ֆոտոլրագրողի գործունէութեանը, ինչը դեռ շարունակուում է նաեւ այսօր:

Ալֆրեդ Եաղուբզադիի մասին մեր այս անդրադարձը համարէք նախաբան՝ նրա հետ կատարելիք գրոյցի համար, որով փորձ պիտի արւի նաեւ անդրադարձ կատարել նրա Ցեղասպանութիւնից վերապրած նախնիների կտրած ճանապարհին:

Ալֆրեդի հետ առաջժամ այսօր...



ARAX-ը՝ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՏՈՒՅՖԻԿԸ

«ԱԼԻԲ», ՀԱՏԻՍ - «ԱՐԱՔՍ» տեսախցիկներն իրենց բնոյթով ենթադրում են սահմանափակ քանակութեամբ արտադրութիւն, քանի որ պատրաստելիս հաշի են առնուում պատկերատուների պահանջած իւրօրինակ տեսանկերը: Այս մասին է յայտնում «ԱՐԱՔՍ» ֆոտոխցիկների ստեղծող Գէորգ Վարդանեանը: Նշւած պատկերները տարբերում են նրանով, որ պատկերատուն ներկայացնում է իրեն հարկաւոր տեսալներ՝ կապւած խցիկի կարողութեանը եւ որակին, որոնք իրականացւում են «ԱՐԱՔՍ»-ի արհեստավարժ աշխատակազմի եւ հմուտ վարպետների միջոցով: Վարդանեանի բնորոշմամբ «ԱՐԱՔՍ»-ի աշխատակազմը՝ տեսակով ու որակով եզակի է, ում ձեռքն ընկած իւրաքանչիւր սարքաւորում շարունակելու է աշխատել ժամացոյցի ճշտապահութեամբ:

Գէորգ Վարդանեանը ծագումով Արցախից է՝ Մարտունեցի: 1982 թւականին ընտանեօք տեղափոխւում են Երեւան, որից 5 տարի անց նա մեկնում է Ուկրաինիա՝ Կիւեւ, զբաղւելով՝ իր այժմեան մասնագիտութեամբ:



«ԱՐԱՔՍ» ֆոտոպարատների արտադրութեան մասին Վարդանեանը մեզ յայտնեց, որ նա իր ստեղծած ֆոտոպարատն «ԱՐԱՔՍ» է անւանել հաշի առնելով, որ այն հայի ձեռամբ պատրաստւած միակ եւ առաջին ֆոտոպարատն է, որն իր անւանումով նոյնպէս



պիտի ներկայացնի Հայաստանն ու կապւած մշտյ հայրենիքին: Գրանով նա ստեղծել է միակ եւ առաջին հայկական ֆոտոխցիկը, որի համար կ'ուրախ է, եւ ի թաքցնում նաեւ իր հպարտութիւնը:

«Մենք ունենք լաւագոյն տեխնիկաների, ովքեր կարող են արտադրել սահմանափակ քանակութեամբ «ԱՐԱՔՍ» տեսախցիկներ պահպանելով բարձրորակ ապրանքի համբաւը»,- նշելով Վարդանեանը յաւելում է, որ որակ հասկացութեան թանկ հաճոյքը՝ ԱՐԱՔՍ-ի միջոցով կարելի է ձեռք բերել անհամեմատ նւագեցւած գնի դիմաց: Նա նշում է նաեւ, որ սպասարկումը չի աւարտում միայն սարքաւորումի պատրաստման աւարտով, այլ այն շարունակւում է մինչեւ արագ աւաքումն ապահովելու աշխատանքներով:

*)tilt & shift-կադրում յստակութեան խորութիւնը փոփոխելու համար քեքւան հնարաւորութեամբ կցորդ, որն ամրացւում է լեւզը՝ խցիկին միացնող օղակին: Արդիւնքում լուսանկարը ամբողջութեամբ շաղում է պակեղով միայն մի կէտի յստակութիւն: